

արտարժույթի միջև գործարքի օրվա դրությամբ առկա փոխանակման փոխարժեքը: Հաշվեկշռի ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հողվածները ներկայացվում են փակման փոխարժեքով: Վարկերի մարման արդյունքում փոխարժեքի տարբերությունները կամ հաշվետվության մեջ գրանցման դեպքում փոխարժեքի տարբերությունները հաշվետու ժամանակաշրջանում դրանց սկզբնական գրանցման կամ նախորդ ֆինանսական հաշվետվություններում գրանցման փոխարժեքից, ճանաչվում են որպես եկամուտ կամ ծախս դրանց առաջացման ժամանակահատվածում: Երբ մարումը կատարվում է հաջորդող հաշվետու ժամանակաշրջաններում, մինչև մարման ժամանակահատվածն ընկած յուրաքանչյուր միջանկյալ ժամանակաշրջանում ճանաչված փոխարժեքային տարբերությունը որոշվում է այդ ժամանակաշրջանում տեղի ունեցած փոխանակման փոխարժեքի փոփոխությամբ:

Ֆինանսական շուկայի մասնակիցների ֆինանսական հաշվետվություններում արտացոլվում է կազմակերպության ֆինանսական վիճակի եւ գործառնությունների վրա գործարար միջավայրի ազդեցության գնահատականը՝ տրված ղեկավարության կողմից, որը, սակայն, կարող է տարբերվել ապագա գործարար միջավայրից: Այդ իսկ պատճառով շատ կարեւոր է կազմակերպել հիմնական գործունեության հստակ փաստաթղթավորումը եւ հաշվապահական հաշվառման կազմակերպումը՝ օրենսդրական դաշտի բոլոր պահանջներին համապատասխան:

ՀՀ Եներգետիկայի ոլորտին հաղորդման եւ էլեկտրաէներգետիկ շուկային ծառայություններ մատուցող ընկերություններում եկամուտների ու ծախսերի հաշվառումը բնութագրվում է որոշակի առանձնահատկություններով: Դա պայմանավորված է ինչպես ոլորտի գործունեության բնույթով, այնպես էլ շուկայում ունեցած մենաշնորհային դիրքով: Վերջինների հետեւանքով, ի տարբերության տնտեսության մյուս ոլորտների, այստեղ, բացի հաշվապահական եւ հարկային հաշվառումից, հատկապես կարեւորվում է պետության կարգավորիչ դերը, որն արտահայտվում է այդ շուկայում ծառայություններ մատուցող ընկերությունների գործունեության նկատմամբ կարգավորող մարմնի հետեւյալ գործառնությունների իրականացմամբ.

- գործունեության լիցենզավորումը,
- կարգավորող մարմնի հաշվետվություններ ներկայացնելու նպատակով լիցենզավորված անձանց համար հաշիվների, ենթահաշիվների համակարգի ներդրումը՝, համաձայն ազգային հաշվային պլանի, հաշվապահական հաշվառման անջվող օրենքների եւ իրավական այլ ակտերի,
- կարգավորվող սակագների սահմանումը՝,
- գործունեության լիցենզիա ունեցող անձանց միջև Եներգիայի եւ (կամ) բնական գազի մատակարարման (ծառայությունների մատուցման), ինչպես նաեւ սպառողների հետ կնքվող Եներգիայի եւ (կամ) բնական գազի մատակարարման (առուվաճառքի) պայմանագրերի օրինակելի ձեւերի կամ պարտադիր պայմանների սահմանումը, գործունեության լիցենզիա ունեցող անձանց միջև կնքված պայմանագրերի գրանցումը,

● շուկայում դրսեւորվող տնտեսական հարաբերությունների կանոնակարգման համար անհրաժեշտ կանոնների եւ կարգերի սահմանումը,

● կարգավորող մարմնի կողմից իր իրավասությունների շրջանակներում իրավական ակտերի սահմանումը, դրանց կատարման գործընթացի վերահսկողության իրականացումը,

● սպասարկման որակի նկատմամբ պահանջների սահմանումը,

● գործունեության լիցենզիա ունեցող անձանց կողմից ներկայացվող գարգացման ներդրումային ծրագրերի ուսումնասիրումը՝ ապագա սակագներում ներդրումների (լրիվ կամ մասնակի) ներառման կամ մերժման նպատակով՝:

Ներկայում ոլորտի կազմակերպությունների մատուցած ծառայություններին համապատասխան համախառն եկամտի եւ ինքնարժեքի՝ ըստ հաշվապահական, հարկային եւ սակագնային հաշվառման մոտեցումները որոշակիորեն տարբերվում են:

Այսպես, հաշվապահական հաշվառման տեսանկյունից ծախսերի եւ եկամուտների հաշվառման հիմնական մոտեցումները սահմանվում են «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքով, հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներով եւ ՀՀ-ում հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական այլ ակտերով: Համաձայն ՀՀՀՀՍ 18 «Հասույթ» ստանդարտի՝ հասույթը սահմանվում է որպես հաշվետու ժամանակաշրջանում կազմակերպության սովորական գործունեությունից առաջացող տնտեսական օգուտների համախառն ներհոսք, որը հանգեցնում է սեփական կապիտալի աճի, բացառությամբ մասնակիցների կողմից սեփական կապիտալում կատարված ներդրումների հետեւանքով կապիտալի աճի:

ՀՀ Եներգետիկայի ոլորտին հաղորդման եւ էլեկտրաէներգետիկ շուկային ծառայություններ մատուցող ընկերություններում եկամուտների եւ ծախսերի հաշվառումը իրականացվում է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի՝ 02.12.2003թ. թիվ 82Ն «Կարգավորմանը վերաբերող հաշվետվությունների ներկայացման համար հաշիվների եւ ենթահաշիվների հաստատման մասին» որոշմամբ սահմանված հաշվային պլանի վեցերորդ՝ եկամուտներ, յոթերորդ՝ ծախսեր եւ ութերորդ՝ կառավարչական հաշվառման դասերի հաշիվներով, որոնցում եկամտային եւ ծախսային հողվածները սահմանված են՝ հաշվի առնելով էլեկտրաէներգետիկ ոլորտի կազմակերպությունների կողմից իրականացվող գործունեության արդյունքում ձեւավորվող եկամուտների եւ ծախսերի առանձնահատկությունները: Նշենք, որ հաշվային պլանի

հաշիվների յուրաքանչյուր խմբում նախատեսված է առանձին հաշիվ՝ տվյալ գործունեության գծով չլիցենզավորված գործունեության եկամուտների եւ ծախսերի արտացոլման համար:

«Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 4-րդ եւ 17-րդ հոդվածների համաձայն՝ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը սահմանում է էլեկտրական, ջերմային էներգիայի եւ բնական գազի, էլեկտրաէներգետիկայի բնագավառում հաղորդման (փոխադրման), բաշխման, համակարգի օպերատորի, էլեկտրաէներգետիկ շուկային ծառայությունների մատուցման կարգավորվող սակագները, ինչպես նաեւ էլեկտրական էներգիայի եւ բնական գազի ներկրման առավելագույն թույլատրելի սակագինը: Ընդ որում՝ «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի՝ էլեկտրական, ջերմային էներգիայի եւ բնական գազի կարգավորվող սակագների ու այդ ոլորտներում ծառայությունների մատուցման դիմաց վճարումների ձեւավորման սկզբունքներն են:

✓ լիցենզիայի պայմաններին համապատասխան լիցենզավորված գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ՝ հիմնավորված շահագործման եւ պահպանման ծախսերի, հիմնական միջոցների մշակման եւ ոչ նյութական ակտիվների ամորտիզացիայի փոխհատուցման ապահովումը,

✓ ողջամիտ շահույթի ստացման հնարավորությունները, ✓ հիմնավորված վարկերի սպասարկման ծախսերի ներառումը,

✓ սպառման ծավալով, պատվիրված հզորությամբ, տարվա եղանակով, օրվա ժամերով, միացման պայմաններով, ծառայությունների տեսակներով պայմանավորված սակագների տարբերակումը,

✓ հիմնավորված եւ անհրաժեշտ ապահովագրական ծախսերի ներառումը,

✓ բնապահպանական նորմերն ապահովելու համար անհրաժեշտ՝ հիմնավորված ծախսերի ներառումը,

✓ ՀՀ կառավարության հաստատած էներգետիկայի զարգացման ծրագրով նախատեսված էներգատեղակայանքների կոնսերվացման եւ պահպանման ծախսերի ներառումը,

✓ օգտագործված միջուկային վառելիքի պահպանման անհրաժեշտ ծախսերի եւ ատոմակայանը շահագործումից հանելու հիմնադրամիս անհրաժեշտ հատկացումների ապահովումը,

✓ տեխնիկական եւ առետրային հիմնավորված կորուստների կիրառումը,

✓ օրենսդրությամբ նախատեսված՝ հիմնավորված եւ անհրաժեշտ այլ ծախսերի ներառումը:

Այս սկզբունքները եւ «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի պահանջները հիմք ընդունելով՝ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը 2005թ. նոյեմբերի 4-ի թիվ 158 որոշմամբ՝ սահմանել է էլեկտրաէներգե-

տիկ համակարգին էլեկտրական էներգիայի հաղորդման, իսկ 2003թ. սեպտեմբերի 30-ի թիվ 62 որոշմամբ՝ էլեկտրաէներգետիկ շուկային լիցենզավորված անձանց կողմից մատուցվող ծառայությունների սակագնի հաշվարկման մեթոդաբանությունները: Վերջինների համաձայն, սակագների հաշվարկման հիմքում դրված է տարեկան անհրաժեշտ հասույթի ապահովման սկզբունքը, որի համաձայն՝ անհրաժեշտ հասույթը պետք է բավարարի իրականացնելու լիցենզավորված անձի հուսալի, անվտանգ եւ շարունակական գործունեության համար պահանջվող գործառնական բոլոր ծախսերը եւ ապահովելու ներգրավված կապիտալի դիմաց թույլատրելի (ողջամիտ) շահույթ: Ընդ որում՝ ոլորտի կազմակերպությունների անհրաժեշտ հասույթը սահմանվում է որպես թույլատրելի տարեկան ծախսերի, հիմնական միջոցների տարեկան մշակման եւ թույլատրելի շահույթի հանրագումար: Թույլատրելի ծախսեր են համարվում սակագնի հաշվարկման 12-ամսյա ժամանակաշրջանի ընթացքում կատարվող ընթացիկ բոլոր այլ ծախսերը, որոնք անհրաժեշտ են լիցենզավորված անձի բնականոն գործունեությունը իրականացնելու համար: Վերջինները ներառում են շահագործման եւ պահպանման ծախսերը (արտադրական անձնակազմի աշխատավարձը եւ սոցիալական ապահովագրության հիմնադրամիս վճարումները, շահագործման համար անհրաժեշտ օժանդակ նյութերը, սեփական ուժերով եւ կապալառու կազմակերպությունների կողմից իրականացվող նորոգման աշխատանքների գծով ծախսերը, գործառնական այլ ծախսեր), ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը (բացառությամբ ԱԱՀ-ի եւ շահութահարկի), տուրքերը եւ պարտադիր այլ վճարներ, ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հիմնավորված եւ անհրաժեշտ այլ ծախսեր: Ինչ վերաբերում է հիմնական միջոցների տարեկան մշակման գումարներին, համաձայն սակագների հաշվարկման մեթոդիկայի՝ այն հաշվարկվում է գծային մեթոդով՝ էլնելով ծառայության մատուցման համար հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից օգտակար եւ օգտագործվող ճանաչված հիմնական միջոցների սկզբնական արժեքից կամ ֆինանսական հաշվետվություններում դրանց փոխարինող այլ գումարներից եւ օգտակար ծառայության ժամանակահատվածից: Ներկայում սակագնի սահմանման կամ վերանայման հայտ ներկայացնելիս լիցենզավորված անձը պետք է ներկայացնի աուդիտորի ստուգած նախորդ տարիների ծախսերը, ընթացիկ տարվա փաստացի (կանխատեսվող) ծախսերը եւ հաշվարկային տարվա նախատեսվող ծախսերը: Ընդ որում՝ անհրաժեշտ է նշել, որ ներկայում սակագների կառուցվածքի մեջ մտնող գրեթե բոլոր հոդվածների գծով ծախսերի հաշվարկման հստակ մոտեցումներ, սկզբունքներ եւ մեթոդներ մշակված չեն եւ որպես այդպիսիք ընդունվում են տվյալ ընկերության գործունեության հետեւանքով ձեւավորված փաստացի ծախսերը: Նման մեթոդիկա է մշակված միայն սակագնում ներառվող կորուստների եւ սե-

ՀՀ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ, ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՍԱԿԱԳՆԱՅԻՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱԴՐԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Վտենախոսության թեմա՝
Հաշվապահական հաշվառման եւ վերլուծության առանձնահատկությունները
ՀՀ էլեկտրաէներգետիկայի ոլորտում
Գիտական դեկավար՝
Նղասի ՍԱՐԳՅԱՆ
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Աննա
ԱՎԱՆԵՍՅԱՆ
ՀՊՏՀ
«Հաշվապահական հաշվառում եւ աուդիտ» ամբիոնի
ասպիրանտ



փական կարիքների համար օգտագործվող՝ էլեկտրաէներգիայի գծով ծախսերի որոշման համար՝: Ընդ որում՝ նշված մեթոդիկայով հաշվարկված կորուստները եւ սեփական կարիքների համար օգտագործված էլեկտրաէներգիայի գծով ծախսերը շահութահարկի հաշվարկման ժամանակ հարկվող շահույթից ամբողջությամբ ենթակա են նվազեցման: Հաշվի առնելով այդ ոլորտում սակագնային կարգավորման դերը, ֆինանսական, սակագնային եւ հարկային հաշվառման համադրելիության ապահովման կարեւորությունը՝ անհրաժեշտ է սակագնում ներառված յուրաքանչյուր առանձին ծախսային հոդվածի գծով սահմանել համապատասխան նորմատիվներ: Ընդ որում՝ կազմակերպության կողմից ծախսերի ինքնուրույն վերաբաշխում սակագնով սահմանված հոդվածների միջեւ չպետք է թույլատրվի: Վերջինները հնարավորության են ընձեռում ապահովել փաստացի եւ սակագնով նախատեսված ծախսերի կառուցվածքների միջեւ համադրելիություն, բարելավել փաստացի ծախսերի վերլուծության իրական հնարավորությունները:

Հարկային հաշվառման տեսակետից, համաձայն «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի⁶, համախառն եկամուտը հարկատուի բոլոր եկամուտների հանրագումարն է՝ անկախ դրանց ստացման արդյունքներից: Ընդ որում՝ կան եկամուտների տեսակներ, որոնց հարկվող եկամուտը որոշելիս, համաձայն «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի, եկամուտ չեն համարվում: Մասնավորապես վերջինների թվին են դասվում հիմնադիրների կողմից հարկ վճարողի կանոնադրական կապիտալում կատարված ներդրումները, հարկ վճարողի բաժնետոմսերի տեղաբաշխման գնի եւ անվանական արժեքի դրական տարբերությունը, արտարժույթի եւ արտարժույթով արտահայտված այլ ակտիվների ու պարտավորությունների, ինչպես նաեւ օրենքով սահմանված կարգով իրականացվող հիմնական միջոցների վերագնահատման դրական արդյունքը, օրենքով տրվող հարկային արտոնությունների, ինչպես նաեւ ընկերության թողարկված հասարակ անվանական բաժնետոմսերը ՀՀ տարածքում գործող ֆոնդային բորսայում ցուցակված ռեզիդենտ ընկերությունների կողմից ստացման ենթակա՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված փոխհատուցման գումարները⁷:

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է դրա ստացման հետ կապված անհրաժեշտ եւ փաստաթղթերով հիմնավորված ծախսերի չափով: Ընդ որում՝ անհրաժեշտ են համարվում անմիջականորեն եւ բացառապես ապրանքների արտադրության, ծառայությունների մատուցման, շուկայում առաջխաղացման եւ (կամ) ապրանքների (ծառայությունների) իրացման, խորհրդատվական եւ իրավաբանական ծառայությունների, ուղեկցման, երաշխիքային հսկողության եւ շահագործման ընթացքում բացահայտված թերությունների վերացման, արտադրության (շինարարության) նախապատրաստման, յուրացման եւ կոնսերվացման, գույքի պահպանման, կադրերի պատրաստման համար հարկատուի կատարած ծախսերը, ինչպես նաեւ եկամտի ստացման հետ կապված եւ դրա համար անհրաժեշտ այլ ծախսերը: «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված, նվազեցման ենթակա ծախսերը համարվում են փաստաթղթերով հիմնավորված, եթե բավարարում են ՀՀ կառավարության 25.08.1998թ. թիվ 525 որոշմամբ սահմանված պահանջները: Վերջինների համաձայն՝ ծախս հիմնավորող փաստաթղթերի նկատմամբ ներկայացվող պահանջները համարվում են բավարարված, եթե դրանք որպես ծախս հաշվեգրելու համար ակտիվների ձեռքբերման գծով իրականացված տնտեսական գործառնությունները հարկ վճարողի մոտ ձեւակերպված են հաշվապահական հաշվառման սկզբնական փաստաթղթերով (հաշվարկային ու այլ փաստաթղթերով), եւ եթե ծախս ձեւակերպող հարկ վճարողների մոտ փաստացի կատարված գործառնություններին վերաբերող առկա հաշվապահական հաշվառման սկզբնական փաստաթղթերն ունեն հաշվապահական հաշվառումը կարգավորող օրենքներով ու իրավական այլ ակտերով ծախսերի (ծախսումների) հավաստիության նկատմամբ ներկայացվող պահանջներն ապահովելու համար անհրաժեշտ տվյալները եւ տարրերը, ինչպես նաեւ կառավարության նշված որոշմամբ հաստատված կար-

գով նախատեսված՝ նյութական եւ ոչ նյութական ակտիվների, ապրանքանյութական պաշարների եւ այլ ակտիվների ձեռքբերման դեպքում՝ նաեւ այլ անհրաժեշտ տվյալներ ու տարրեր: Ինչպես հարկային, այնպես էլ հաշվապահական հաշվառման իրականացման գործընթացում եկամուտների եւ ծախսերի հաշվառումը իրականացվում է հաշվեգրման եղանակով: Նշենք, որ հաշվապահական եւ հարկվող շահույթի հաշվարկման տարբերությունները ներառվում են մշտական եւ ժամանակավոր տարբերություններում:

Սակագնային եւ հարկային հաշվառման վերը շարադրված մոտեցումների հետեւանքով կազմակերպության հաշվառման գործընթացում առաջ են գալիս հետեւյալ խնդիրները.

- «Ըներգետիկայի մասին» եւ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքներով տրվում են անհրաժեշտ ծախսերի տարբեր սահմանումներ, ինչի հետեւանքով երկու՝ հավասարազոր իրավական ակտերի միջեւ առաջանում են հակասություններ: Դրանք հնարավորություն են տալիս անհրաժեշտ ծախսերի, հետեւապես՝ նաեւ կազմակերպության գործունեության արդյունքում ձեւավորվող հարկային բազայի հաշվարկման գործընթացում կատարել այլընտրանքային մեկնաբանություններ:

- Ֆինանսական եւ սակագնային հաշվառման կազմակերպման գործընթացում իրականացվում է ըստ գործունեության առանձին տեսակների առանձնացված հաշվառում: Հարկային հաշվառման գործընթացում, համաձայն «Ռեզիդենտների կողմից շահութահարկի հաշվարկման եւ վճարման կարգի մասին»⁸ հրահանգի, շահութահարկի հաշվարկի 1-ին բաժնում ներկայացվում է հաշվետու ժամանակաշրջանում ռեզիդենտի գործունեության արդյունքում ստացված համախառն եկամուտը՝ ըստ գործունեության առանձին տեսակների: Ի տարբերություն հասույթի ներկայացման՝ շահութահարկի հաշվարկի 2-րդ բաժնում ծախսերի՝ ըստ կազմակերպության գործունեության առանձին տեսակների դասակարգում չի իրականացվում: Այստեղ ցույց են տրվում հաշվետու տարում համախառն եկամտից կատարված, «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված նվազեցումները, որոնք վերաբերում են կազմակերպության կողմից իրականացվող գործունեության բոլոր տեսակների եւ խմբավորված են «համախառն եկամտից նվազեցվող ծախսեր», «համախառն եկամտից նվազեցվող կորուստներ» եւ «համախառն եկամտից կատարվող այլ նվազեցումներ» խմբերում: Վերջինները հնարավորություն չեն ընձեռում ապահովել ֆինանսական, սակագնային եւ հարկային հաշվառմամբ հաշվեգրված անհրաժեշտ ծախսերի համադրելիություն:

- ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից սակագների սահմանմանը եւ վերանայմանը առնչվող իրավական ակտերում բացակայում է կազմակերպության գործունեության հետեւանքով ստացված եկամուտների եւ կատարված ծախսերի փաստաթղթային հիմնավորվածության պահանջը, որն իր հերթին կարող է հանգեցնել սակագնով սահմանված եւ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի դրույթների՝ համապատասխան հարկվող եկամտի ու դրանից նվազեցվող անհրաժեշտ ծախսերի բազաների անհամապատասխանության:

- «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով, բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային, ապահովագրական եւ այլ ընկերություններում գործունեության առանձնահատկություններից էլնելով, սահմանվում են հարկային հաշվառման կազմակերպման առանձին մոտեցումներ, սակայն անտեսվում է Ըներգետիկայի ոլորտի խիստ առանձնահատուկ բնույթը: Վերջինների գծով «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով եկամուտների, ծախսերի ճանաչման, դրանց փաստաթղթային հիմնավորվածության ապահովման, ծախսերի՝ համախառն եկամտից նվազեցման եւ ոլորտի առանձնահատկությունները հաշվի առնող հարկային հաշվառման իրականացման մոտեցումներ չեն սահմանվում:

- ՀՀ Ըներգետիկայի ոլորտը կարգավորող իրավական ակտերով նախատեսված չէ կարգավորողի կողմից կազմակերպության գործունեության սակագնով սահմանված ցուցանիշների նկատմամբ վերահսկողության իրականացում, ինչը կարող է հանգեցնել ընկերությունների կողմից սակագնով սահմանված ծախսային հոդվածների կառուցվածքի եւ չափաբաժին-

ների խախտման՝ առանց որեւէ ֆինանսական կամ իրավական հետեւանքների: Բացի այդ, նման վերահսկողությունը հնարավորություն կընձեռնի կատարել կազմակերպության փաստացի ֆինանսատնտեսական եւ արտադրական գործունեության մակրամասն վերլուծություն՝ սակագների որոշման, ինչպէս նաեւ ծախսերի կրճատման հնարավոր ուղիների բացահայտման հնարավորությունների ներառման նպատակով:

Վերը շարադրված խնդիրների լուծման համար անհրաժեշտ է.

- Կատարել «Շահութահարկի մասին» եւ «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքների համապատասխանեցում՝ անհրաժեշտ ծախսերի որոշման գործընթացում միասնական մոտեցումների սահմանման միջոցով:

- Ռեզիդենտների կողմից շահութահարկի հաշվարկման եւ վճարման կարգի մասին հրահանգով սահմանված շահութահարկի հաշվարկում կազմակերպության յուրաքանչյուր առանձին գործունեության տեսակների գծով հասույթը եւ դրանց ստացման համար անհրաժեշտ ու փաստաթղթերով հիմնավորված ծախսերը պետք է ներկայացվեն առանձնացված ձևով: Վերջինները հնարավորություն կտան առավել հստակ ներկայացնել գործունեության յուրաքանչյուր տեսակի գծով հասույթը, դրա ստացման համար անհրաժեշտ ու փաստաթղթերով հիմնավորված ծախսերը, եւ կապահովվի կազմակերպության ֆինանսական, սակագնային ու հարկային հաշվառման տեսանկյունից գործունեության առանձին տեսակների գծով հաշվարկված հասույթի եւ անհրաժեշտ ծախսերի համարդրելիություն:

- «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանել ՀՀ Էներգետիկայի բնագավառի ընկերություններում հարկային հաշվառման կազմակերպման այնպիսի մոտեցումներ եւ սկզբունքներ, որոնք թույլ կտան հաշվի առնել ոլորտի առանձնահատկությունները, մասնավորապես՝

- ✓ հիմնական միջոցների եւ ոչ նյութական ակտիվների, դրանց մաշվածության եւ ամորտիզացիայի, վերագնահատումների հետեւանքով առաջացած եկամուտների ու ծախսերի հաշվառման մոտեցումները,

- ✓ նյութական ծախսերի հաշվառման մոտեցումները,

- ✓ սորոգման ծախսերի հաշվառման մոտեցումները,

- ✓ գիտահետազոտական եւ փորձակոնստրուկտորական աշխատանքների իրականացման գծով ծախսերի հաշվառման մոտեցումները,

- ✓ գործուղման եւ այլ ծախսերի հաշվառման նպատակով կիրառվող մոտեցումները:

- Կատարել Էներգետիկայի ոլորտում գործունեություն իրականացնող կազմակերպությունների անհրաժեշտ ծախսերի սակագնով սահմանված եւ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի դրույթներին համապատասխան հաշվարկված եկամուտների ու ծախսերի բազաների համապատասխանեցում:

- Ապահովել ֆինանսական, սակագնային եւ հաշվապահական հաշվառման տվյալների միջեւ համարդրելիություն՝ այդ ոլորտներում հաշվառման փոխհամաձայնեցված օրենսդրական մոտեցումների սահմանման միջոցով:

- Ստեղծել անհրաժեշտ մեխանիզմներ՝ սակագներով սահմանված եւ փաստացի կատարված ծախսերի համապատասխանությունը, դրանց փաստաթղթային հիմնավորվածությունը, նպատակային նշանակությունը եւ անհրաժեշտությունը վերահսկելու համար:

1. ՀՀ բնական մենաշնորհները կարգավորող հանձնաժողովի 02.12.2003թ. թիվ 82 Ն որոշում՝ «Կարգավորմանը վերաբերող հաշվետվությունների ներկայացման համար հաշիվների եւ ենթահաշիվների հաստատման մասին»
2. ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2005թ. նոյեմբերի 4-ի թիվ 158 Ա որոշում՝ «Էլեկտրաէներգետիկական համակարգին էլեկտրական էներգիայի հաղորդման ծառայության մատուցման սակագնի հաշվարկման մեթոդաբանությունը հաստատելու մասին», ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2003թ. սեպտեմբերի 30-ի թիվ 621 որոշում՝ «Էլեկտրաէներգետիկական շուկային լիցենզավորված անձանց կողմից մատուցվող ծառայությունների սակագների հաշվարկման մեթոդիկայի հաստատման մասին»
3. «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենք, ՀՕ-148, ընդունվել է 07.03.2001, ուժի մեջ է 01.04.2001, Հոդված 10
4. «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ տնտեսական եւ 110 120 կՎ լարման ենթակայանների սեփական կարիքների համար ծախսվող էլեկտրաէներգիայի հաշվարկի մեթոդիկաները հաստատելու մասին» որոշում, 9 օգոստոսի, 2004, թիվ 98 Ա
5. ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2001թ. նոյեմբերի 19-ի՝ «110 կՎ եւ բարձր լարման ցանցերում էլեկտրաէներգիայի տեխնոլոգիական անխուսափելի կորուստների հաշվարկի մեթոդիկան» հաստատելու մասին թիվ 60 որոշում, ՀՀ կառավարության 1999թ. ապրիլի 29-ի որոշում՝ «Հարկման նպատակով համախառն եկամտից նվազեցվող գույքի փաստացի կորուստի (բնական կորուստի) չափը սահմանելու կարգի մասին», ՀՀ Էներգետիկայի նախարարության 14.04.1999թ. թիվ 58 ՍՄ որոշում՝ «Հայաստանի Հանրապետության Էներգետիկայի բնագավառում տնտեսվարող սուբյեկտների հարկվող շահույթը որոշելիս փաստացի (բնական) կորուստների որոշման կարգը հաստատելու մասին»
 6. «Շահութահարկի մասին» ՀՀ օրենք, Հոդված 7
 7. «Շահութահարկի մասին» ՀՀ օրենք, Հոդված 8
 8. ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետի թիվ 1-057-Ն հրաման՝ «Ռեզիդենտների կողմից շահութահարկի հաշվարկման եւ վճարման կարգի մասին» հրահանգը հաստատելու մասին», ընդունվել է 02.04.2004, ուժի մեջ է 13.05.2004